



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅՔ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԲ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1897

ԹԻՒ 12



ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՆՈՒԹԻՆՆԵՐՈՒ
ՀՆՈՒԹԻՆՆԵՐ

Ս.յս պատկերը կը ներկայա-
ցընէ Հիւսիսային Ամերիկայի
Հնդիկ ցեղապետներուն զէն-
քերը և զարդերը: Ս.յս հնու-
թիւնները կը գտնուին Լորնի
մարքիզին հաւաքածոյին մէջ:
Ոմանք գլխու և ոտքերու ծած-
կոցներ են, մին ալ շատ զար-
դարուն պատմունճան մը: Հիւսի-
սային Ամերիկայի նախկին բնա-
կիչները շատ սիրահար էին փե-
տուրներու: Ամենէն մեծ ցե-
ղապետները երբեմն կ'ունենա-
ին ամենէն չքեղ և հազուա-
գիւտ փետուրներով զարդար-
ուած պատմունճաններ, որոնց
չինութեան համար հազարաւոր
փետուրներ մէկտեղ կը բերուէ-
ին շատ հանճարով և ճարտա-
րութեամբ:

Անոնք շատ սիրահար էին և
հիմա ալ են ուրունքներու (պո-
նո-ք), և անոնցմէ կը շինեն կո-
շիկներ և ամէն տեսակ հան-
դերձներ և զարդեր մեծ աշ-
խատութեամբ և յաճախ ըն-
տիր ճաշակով: Հնդկուհիները
կը շինեն զանոնք, և ընդհան-
րապէս ցեղապետները կը հագ-
նին: Ուրունքներու բանուածքը
տակաւին արհեստն է այն Ամե-
րիկեան Հնդկաց որոնք կը մնան
Միացեալ Նահանգաց արև-
մտեան մասին և Բրիտանական
Ամերիկայի մէջ:

ՕԳՆՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Շատ երջանիկ պիտի ապրէ-
նք այլաբարհիւ մէջ եթէ յո-
ժարութեամբ 'օգնէինք իրա-
րու: Ամէնքս ալ օգնութեան

կարօտ ենք: Ամէն մանուկ օգնութիւն ընդունելու է, եթէ ոչ՝ կը մեռնի. և օրորոցէն մինչև գերեզման շատ քիչեր կան որ կըրնան ապրիլ աշխարհիս մէջ առանց ուրիշներուն օգնութեանը: Տղաք շատ օգնութեան պէտք ունին: Մանկութեան մէջ պէտք ունին հոգածութեան, տղայութեան հասակին մէջ պէտք ունին պաշտպանութեան, երիտասարդութեան հասակին մէջ պէտք ունին մարդասիրութեան և ձեռն-

ընէ, նեղութիւն կրէ, և շատ քիչ բան կայ որ տղաք կրնան ընել իբրև փոխարէն բոլոր ասոնց: Չեն կրնար ստակ շահիլ, չեն կրնար հատուցանել ցուցուած մարդասիրութիւնը, բայց երբեմն կրնան ընել քիչ մը բան, և այդ քիչը օգնել է:

Քիչ տղաք կը գտնուին որ չկրնան օգնել եթէ ուզեն: Կրնան շատ կերպերով թեթևցնել բեռն ուրիշներուն որոնք իրենցմէ աւելի կարող են կրելու: Փոքրիկ աղջիկը որ կը սորվի կա-

տանգները: Հարկաւ լոկ երևակայական տեսարան մը կը ներկայացնէ: Աղջկան մը գէղեղով և ցրուած մազերով կենդանին թևեր և սոսկալի մազիչներ ունի: Ստակը և գինին, ծաղիկներ և երածչտութիւն կը հրապուրեն երիտասարդը: Բայց նա իր երեսը հաստատ կերպով դարձուցած է աւելի բարձր և աւելի աղէկ բաներու քան այնպիսի բաներու որ ձեռք կը բերուին զգայարանները գոհացնելով: Ոչ թովչութիւնը պարիկներուն (յաւերժահարս), որ կը ծածկեն օձին խայթոցը, և ոչ գեղեցկութեան կամ գեղարուեստի հաճոյքները կրնան ետ պահել զանիկա առաքինութեան, պատուոյ և իմաստութեան հետամուտ ըլլալէ: Անոնք չեն կրնար արգիլել զանիկա յարմար ժամանակին բոլոր ազնիւ հոգիներուն, անոնց ընկերակցութեան և Աստուծոյ շնորհներուն հասնելէ: Միայն ասոնց մէջ կայ մնայուն երջանկութիւն: Բայց, աւա՜ղ, որ անմիտ երիտասարդներ աւելի կ'ընտրեն ներկայ հաճոյքները և յախտենական կորուստ և վիշտ քան ներկայ նեղութիւններն ու անձնութեան թաղանթները և անոնց հետ հոգւոյն խաղաղութեան յախտենական ժառանգութիւնը, երկնից ընկերակցութիւնը և Աստուծոյ սէրը, ծառայութիւնը և շնորհքը:



ՇՈՒԵՏԱՅԻ ԱՂՋԻԿ ԵՒ ԿՈՎԸ


Երեւոնի կողմն փոքրիկ ձագը իր քովէն առնուած էր, և բոլոր օրը խեղճը գրանը քով կայնած՝ իր երկար պարանոցը կ'երկնցնէր կ'երկնցնէր և կը պոռար փողի ձայնի պէս զօրաւոր ձայնով, և երբ ընթրիքի ժամանակն եկաւ, վշտացած և բարկացած ըսաւ ինքնիրեն թէ, եթէ իրեն ետ չտան իր չորս սիրուն դողողուն սրունքներով և շարժուն պոչով ձագուկը, ինքն ալ ուրիշ ուէ մէկու կաթ պիտի չտայ:

Առաջ Յովհան սպասաւորը գնաց և ջանաց կ'իջէր զանիկա, բայց ետ դարձաւ տուն կարգիւմ երեւներով և պարապ դոյլով: Սպասաւորը թէ «անգգամ կենդանին ջագով մտաւորամ կաթ չտուաւ»: Յետոյ ինքն ասաւ «սիրով որդին, առաջին յոյսով ասաւ կ'իջէր, բայց երեսը չկարգեց՝ ետքը այն հեզ ձեռունի կողմէն պոռաւ իր ոտքը և Այէք ինքզինը Կոտեմա՝ գրտաւ արօտին ցանկին միայն և այն պէս ապշեցաւ որ չէր կրնար խօսիլ:



THE CHOICE

րել և կարկտել իրեն հանդերձները և փրկել իր մօր ժամանակը, որ կրնայ երթալ ուր որ կը զրկուի, և կը հանգչեցնէ յոգնածը, յոգնած մայրը, այսպիսի աղջիկ մը կ'օգնէ և դանձ մըն է ուէ տան մէջ: Բայց այն տղաք և աղջիկներ որ անձնասէր են, տըտընջող են, գանգատող են և ուրիշներու վրայ պակասութիւն դառնող են, իրենք օրհնութիւն չեն վայելը և քիչ մխիթարութիւն են իրենց բարեկամներուն: Եթէ ամէն պղտիկ ջանայ կարելի եղածին չափ քիչ նեղութիւն տալ ուրիշին և կրցածին չափ օգնէ ուէ կերպով, շատ տուներ աւելի երջանիկ կ'ըլլան և շատ կեանքեր հիմակուրնէ աւելի ուրախ և զուարթ:



ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Վերի պատկերը պայծառ կերպով կը ցուցնէ երիտասարդներուն առջեւ ելող հրապոյրները նաև ասոնց վը-

տուութեան: Մէկը պէտք է կերակրէ զանոնք, հագուեցնէ զանոնք, հսկէ անոնց վրայ և պահպանէ զանոնք նեղութենէ և շարիքներէ: Այս է ծընողներուն, խնամակալներուն և բարեկամներուն գործը: Բայց ցաւալի է որ երբեմն չճանչցուի ինչպէս արժան է:

Տղաք քիչ կը խորհին թէ իրենք որչափ նեղութիւն կու տան: Ամէն ինչ որ կ'ուտեն, ամէն ինչ որ կը հագնին, պատճառ է որ մէկը աշխատի, հոգ-

Ասոր վրայ տանուտերն ինք առաւ դոյրը և, բան մը մաշտալով թէ ինքն էր միայն հոն գտնուողներուն մէջ այն անձը որ կենդանիներու հետ վարուեւ լէ կը հասկնար, գլխարկը ամուր մը վար քաշեց և աներևութացաւ ետևի դռնէն: Մէկը չգիտեր ճիշդ թէ ինչ պատահեցաւ, բայց մարդը քիչ ետքը դարձաւ բթամատը վստաւած և ըսաւ տիկնոջը, «Սոյդ կովը կիներուն կը նմանի, եթէ անոնցմէ մէկը անգամ մը յամառի, ա՛լ հնար չէ համոզել:» Իսկ կովը կը ցածցնէր իր եղջիրները և ողբաձայն կը բառնայէր:

Այն ատեն Գրիստինէ, կոկիկ, առաջադարձ սպասուհին, որ Շուետէ եկած էր հեռաւոր ծովերուն վրայէն, տիկնոջը թեզանիքէն քաշեց և ըսաւ փայլուն աչքերը անկած, «Եթէ հրաման կու տաք, ես կը կթեմ կովը:» «Ո՛հ, կը համարձակիս փորձել:» ազդակեց խեղճ կինը քիչ մը սփոփուած:

Եւ աղջիկը դնաց մինչ Յովհան կը դեգերէր ամբարանոցին անկիւնը և Սէքը իր երջանկութիւնը կը ծածկէր ետևի սրահին մէջ: Երբ կովը այս ատեն կատղած կը կենար և աչքերը անկած չորս կողմ կը նայէր իրեն մօտեցողներուն շարիք հասցնելու պատրաստ: Բայց երբ փափուկ բազուկ մը դպաւ իր պարանոցին շուրջը, և թեթևուկ ձեռք մը սկսաւ շոյել զինք, և նոյն ժամանակ քաղցր և կարեկից ձայն մը Շուետական համակրանքով անոյշ խօսքեր մը մնջեց, ծեր կովուն վիշտը և բարկութիւնը անհետ եղան այս փաղաքշական խօսքերուն ազդեցութենէն, մինչև որ քանի մը վայրկեանէն այնքան մոռցաւ ինքզինքը, որ սկսաւ ուտել թարմ, անուշահոտ առուոյտի փունջ մը զոր իր դունչին տակը բռնած էր նոյն բարեկամական ձեռքը:

Այն ատեն Գրիստինէ ժողվեց իր քղանցները, նստաւ եռոտանի աթոռակին վրայ, բացաւ շրթունքները և սկսաւ երգել:

Կովը առաջ չհասկցաւ երբեք: Եղանակ եղանակի կը յաջորդէր, քաղցր ձայն թռչուններու դայալայիկին պէս, տերևներու ջրհոսանքին պէս, վտակներու արագ թրթռումներին պէս — այն հազար տեղերի բայերուն պէս որ իր ականջները կը կոտորէր ընդ որը արտաքին մէջ Գրիստինէ սա տարբերութեամբ որոշակապիս բառերով և եղանակներով կէն, որոնց մէկը չկայ միւսներուն մէջ: Շուտով իր կովային խաշոր ուղեղին մէջ երազի պէս շող

չողացին հաճելի պատկերներ, հաճելի կեակատար խորհուրդներ, և նոյն ժամանակ սկսաւ որոճալ, ինչպէս մշտ կ'ընեն կովերը երբ հանգստութիւն կը զգան: Եւ ահա կաթին դոյրը հետզհետէ լեցուեցաւ և դոյլին բերնին մօտեցաւ մէջի կաթը, ինչպէս ըսուած ձայնէն ալ կը հասկցուէր: Բայց Գրիստինէի գործունեայ մատերը տակաւին կը շարունակէին իրենց աշխատութիւնը: Վերջին երգը լնցաւ երբ վերջին կաթիլը թափեցաւ դոյլին մէջ, և Գրիստինէ մնաս բարևի մեղմ հարուած մը տալով կենդանիին մետաքսեայ պարանոցին, և «Երեղ կով» ըսելով անոր թաւամազ ականջին մէջ, ելաւ յաղթանակով և իր քայլերը դէպ ի խոհանոց ուղղեց:



ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՆՌԿԱՅ ԼԷՔՐՈՍ ԽԱՂԸ


Այս խաղը Ամերիկեան Հնդիկներուն սիրելի մէկ զբօսանքն էր, և հիմա ալ տակաւին կը խաղցուի Մըքսիկոյի և Գուիպէքի նման քաղաքներուն մէջ: Ոտքի, աչքի և ձեռքի մեծ արագութիւն պահանջող խաղ է: Կը խաղցուի ձգախիժէ անամէջ (մէջը պարապ) գնտակով մը և տեսակ մը դաւազանով ինչպէս կ'երևնայ պատկերին մէջ:

Խաղացողները երկու կողմերու կը բաժնուին, ամէն մէկ կողմ տասներկու հոգի. բայց ասոնց թիւը յաճախ

աւելի մեծ կ'ըլլայ: Խաղացողները կը ցրուին դաշտին վրայ, երկու երկու, մէյմէկ հոգի երկու կողմերէն: Գընտակին բան պէտք չէ դպչի բայց միայն Լէքրոսին դաւազանը: Խաղը առուոր փորձ է ուժի, թեթևաշարժութեան, արթնութեան և արագութեան: Եւ խաղացողներուն զիբբը և շարժումները մեծապէս կը հետաքրքրեն հանդիսատեսները: Մէկ վայրկեանին կը թուի թէ գնտակը պիտի հասնի դաշտին մէկ ծայրը գտնուող նշաւակին (ֆլանկեմ) և յաջորդ վայրկեանին կը բռնուի և կը նետուի դաշտին հակառակ ծայրը:

Գնտակը կ'ուղղուի Լէքրոսին գաւազանին, բայց հարուածը կրնայ խաղացողին բազուկին կամ գլխուն գալ: Այսու ամենայնիւ խաղը Միացեալ Նահանգաց և Մեքսիկոյ միւս ժողովրդական խաղերէն աւելի վտանգաւոր չէ:

Կինը կրնան իրենց ծոյլ կամ երկշտ երկիւնները այս խաղը խաղալու մղել: Լէքրոսը հաւանօրէն իբրև հանրային խաղ պիտի մնայ Բանատայի մէջ:



ԹՂԹԷ ՏՈՒՆ ՇԻՆՈՂԸ

Մարդիկ հիմա գրեթէ ամէն բան կը շինեն թղթէ, տան ծածքէն մինչև կառքի անիւ: Բայց պիծակները իրօք թուղթ շինողներ էին մարդոց այդ արհեստը գիտնալէն շատ առաջ, և թուղթ կը շինէին որեթէ ճիշդ այն գործողութիւններով որոնցմով մարդիկ հիմա կը շինեն թուղթը: Սա ստոյգ է որ բոլոր այն հին ժամանակները երբ մարդիկ իրենց բնակարանները շինելու կը գործածէին փայտ, քար, պղինձ, ծառերուն կեղևը և կենդանիներու մորթեր, այս փոքրիկ միջատը իր բնակարանը շատ մը աւելի աղէկ նիւթէ կը շինէր:

Դեռ մօտ ժամանակներս էր որ մարդիկ սորվեցան փայտէ թուղթ շինել: Բայց պիծակները դարերէ հետէ կը շարունակեն փայտէ թուղթ շինել: Պիծակին գործածած փայտի մանրաթելերը մատնաչափի մը տասներորդին չափ երկայնութիւն ունին և մազէն աւելի բարակ են: Պիծակները ատոնք կը հաւաքեն, խուրձ խուրձ կ'ընեն և հետզհետէ խուրձերուն վրայ անոնցմէ կ'աւելցնեն տեղէտեղ երթևեկելու ժամանակ: Եթէ դիտելու ըլլաք, պիտի տեսնէք թէ այս փայտը ուրիշ միջատներու կրծած փայտէն շատ տարբեր է: Այս ման-

րաթերերը ճակերով կտաւի պէս բան մը կ'ընեն գործածելէ առաջ, իրենց դունչով կամ ծնօտներով: Հին և չորրորդ փայտերը աւելի կ'ընտրեն: Ճակերու գործողութենէն ետքը տեսակ մը փակուուն նիւթ կը գործածեն, զոր իրենց բերաններէն կը հանեն, մանրաթելերը իրարու փակցնելու համար: Յետոյ ամէնքը շաղերով թուղթի շաղախի պէս շաղախ մը կ'ընեն, և զընտակի կերպարանք կու տան անոր: Յետոյ վրան կը կոխկուտեն իրենց ոտքերով և ամենաբարակ թուղթի չափ կը բարակցնեն:

Պիծակին՝ թուղթը պատրաստելէն ետքը բրած առաջին բանն է իր տան առաստաղը անով պատել: Այս նպատակին համար տասներկնից քսան խաւ կամ թերթ իրարու վրայ կը փակցնէ, և շատ անգամ երկու մասնաչափ թանձրութեամբ պատ մը կը շինէ անկէ: Այս խաւերը կը դրուին իրարու վրայ, մէջտեղերը միջոցներ թողլով, ինչպէս կը տեսնէք երբ անոնց բոյները կը դիտէք: Անոնք կը նմանին շատ մը փոքրիկ խեցեմորթներու: Պիծակը առաստաղին գործը ընդհանրէն ետքը կը շինէ բոյնին մնացած մասը, որ կը բաղկանայ անթիւ թուղթի թերթերէ: Եւ երբ այս ալ կը ըննայ, մեղրի բջիջներու պէս կ'երևնայ շինածը, միայն թէ աւելի թեթեւ է և սիրուն: Թերևս պիտի խորհիք թէ այդ բջիջները մեղրի համար են: Բայց չեն վասն զի պիծակները երբեք մեղր չեն շիներ: Պիծակները այս բջիջները կը պատրաստեն իրենց ձագերուն համար միայն: Անոնց մէջ կ'ածեն իրենց ձուերը, և անոնց մէջ կը սնուցանեն և կը մեծցնեն իրենց ամած ձուերէն ելող ձագերը:

«ԱՄԷՆ ՓԱՅԼՈՂ ՆԻԻԹ ՈՍԿԻ ԶԷ»
 «Աչքի երեցածին պէս դատաստան մի ընէք»
 Յոգ. Է. 24:

Երկաթի հրաքարը շատ հասարակ հանածոյ մըն է: Շատ տեղեր կը գտնուի: Շատ պայծառ և չողողուն երևոյթ ունի, և զանիկա չճանչողները ոսկի կը կարծեն: Տգէտ մարդիկ երբեմն շատ ստակ վատնած են զանիկա հանելու նպատակաւ գետինը փորելու համար: Կը կոչուի «յիմարի ոսկի»:

Երբեմն զուտ արծաթը պզօտ և չէրթէ սև կերպարանք կ'ունենայ: Թերևս, եթէ հանդիպիք անոր, մէկդի կը նետէք: Բայց ոսկերիչը գիտէ անոր արժէքը: Կրնայ շուտ մը նորէն փայ-

լեցնել զանիկա: Կը գտնուին կարծր և հասարակ երևոյթով քարեր, որոնք սակայն նաև ոսկի կը պարունակեն. և թէև տաքութիւնը «յիմարի ոսկին» կը սեցնէ, սակայն այդ քարերէն մաքուր ոսկի կը հանէ:

Երբեմն «քուարց» կոչուած բիւրեղները շատ փայլուն կ'ըլլան, մինչ առամանդները, երբ առաջին անգամ կը գտնուին, շատ հեղ հասարակ քարերու երևոյթ կ'ունենան: Շատ մարդիկ հազարաւոր ոսկիներ արժող բայց անտաջ աղամանդը կը փոխեն հինգ դահեկանէ աւելի արժէք չունեցող բայց գեղեցիկ քուարցի բիւրեղի մը հետ:

Բոլոր այս յիշուած նիւթերը ճիշդ նման են մարդոց: Ամենէն բարի մարդիկ միշտ անոնք չեն որ փայլուն կ'երևնան: Աշխարհիս մէջ ամենէն պատուական սիրտերը անտաջ վիճակի մէջ աղամանդներ են. և աշխարհիս ամենէն չար մարդոցմէ ոմանք դրսուանց բաւական փայլուն և չողողուն են:

Աբրահամ Լինքըն կերպարանքով ազեղ և բնաւորութեամբ կոպիտ էր: Չէր փայլեր, բայց պատուական սրտի մը տէր էր: Աղամանդ մը ունէր կոշտ և անտաջ վիճակի մէջ, և նաւերով ոսկիներ չէին կրնար փոխարէն ըլլալ անոր իր հայրենեաց մատուցած ծառայութեանը:

Բաղաքային կեանքը և քաղաքային զբաղումները աւելի կը փայլին երիտասարդներուն աչքին քան գեղջուկ կեանքը և գեղջուկ զբաղումները: Բայց կարծեմ գեղերու մէջ ապրող և գործող անձինք քաղաքի մէջ բնակողներէ աւելի քաղցր գոհունակութիւն, այսինքն կեանքին ոսկի երջանկութիւնը, կը վայելեն:

Մեր բնաբանը խօսող էակը չէր փայլեր աշխարհի աչքին: Իր մտութեան օրորոցէն չէր փայլեր ո՛չ ոսկի ժանեակներով (ֆանթէլա) և ոչ չողողուն գոհարներով: Մարդիկ անոր վրայ կը նայէին և կ'ըսէին, «Ծարաւուտ երկրէ ելող արմատի պէս բուսաւ: Կերպարանք կամ վայելչութիւն չունէր որ անոր նայէինք» Բայց ոմանք անոր կը նայէին և լուռ կը մնային: Անոր աչքերուն մէջ Աստուածային լույս կը տեսնէին: Մտիկ կ'ընէին երբ կը խօսէր ոսկի խօսքեր, և կը դիտէին զանիկա երբ կը կատարէր ոսկի գործեր: Ուստի իրենց միաբը փոխեցին և ըսին, «Այս ամենէն ընտիր ոսկին է. այս երկնային անզուգական գոհարն է. տաքը հազարին մէջ երևելին է. բուրովին սիրուն է»: Աշխատեցան անոր

պատկերին փոխուիլ, և վերջապէս անճառելի ցնծութեամբ ըսին, «Իբրևս տոս իմն է ու ես անորն եմ»: Անոր երկնային փառքին մէջ պիտի հազուին անթարչամ գեղեցկութեամբ, և անոր սիրոյն մէջ պիտի գտնեն յաւիտենական ուրախութիւն:

Մենք բարի Տէրոջ մը կը ծառայենք: Շատ համբերող է նա և երկայնամիտ մեր բոլոր անկատար ծառայութիւններուն. և «Ապրիս» կ'ըսէ շատ բաներու որ մեր աչքերուն ալ պակասաւոր և անարժէք են, Բայց այս բարի Տէրը մեր աշխատութիւնները կը չափէ մեր սիրովը, և սիրոյ նուէրը միշտ գեղեցիկ է անոր աչքերուն:

Աստուծոյ ծառայութիւնը մեծ օրհնութիւն է: Մեզի չարիք երբեք չհասնիր եթէ մեր երկնաւոր Թագաւորին գործին մէջն ըլլանք: Երբեմն նա մեր վրայ ծանր բեռներ կը դնէ. և մեզմէ կը ծածկէ մեր կատարած գործին կատարեալ գեղեցկութիւնը: Այսու ամենայնիւ ինքն է գործին վարպետը և ամէն բաներն աղէկ կ'ընէ:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀՈՎՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ

	Ռ				
Ա		Ե		Ն	
	Ք		Օ		
Բ	Օ	Ս	Ր	Ա	
	Ա		Ա		
Ս		Փ		Բ	
		Ա			

Լուծեցին, Կ. Պալես. — Ովսեա Երամեան, Յակոբ Ս. Խանասանեան: Գ. Ս. Գաբրիէլեան, Հրանգ Հ. Համամեան, Զմիւռնիա. — Նուարգ Սարգիսեան, Գրբէհեր. — Սարգիս Գ. Գաթրանեան:

	3				
4			2		
	8	11			
		12			
10	6	9	16	4	
			14		
	15				
7		17		13	
		3			

Լուծեցին, Գրբէհեր. — Սարգիս Գ. Գաթրանեան, Կ. Սարգիս. — Գ. Ս. Գաբրիէլեան, Հրանգ Հ. Համամեան:

Ամերիկայի Միացեալ Պահպանութեան կողմէն,
 Արժեքը 50 ԿԲԻՆ
 Տնօրէն Գ. ՀԷՐԻԲ
 Ֆինանսներու Դեպարտման խան

ԵՊՈՒՍ
 ՊՕՅԱԾԱՆ